ամենեքեան յուսահատեալք, յուսադրող ոք չի՛ մնաց.
Հերձուածողաց ժամն պատեալ, կարի յոյժ կատաղեցան,
և հարկանող զճակատ նոցին՝ յաղթող Դաւիթ չի՛ մնաց.
Երգ՝ ամենայն գլուխ ի ցաւս, և ամենայն սիրտ ի հոգս,
յատից մինչև ցծայրս գագաթան, առողջութիւն չի՛ մնաց.
Ողբալի Յակոբ, մշտալի պատրիարգ, վտարանդեալ կենօք
տարագիր շրջիս, մխիթարող այր չի՛ մնաց.
Բրաամիք կարի աշխատեցար, յաչաց լուսոյ պակասեցար,
երկար ամօք վաստակեցար, երկանցդ գիտցող՝ այր չի՛ մնաց.
Ո՞ւր իցես Նէ՛ող, ե՛կ, երևեա՛ց, զի վախճան է աշխարհիս,
թէ հարցանես զգալստենէ քո, գուշակ նշմար չի՛ մնաց.

---

Ներկայ տարւոյս Յունվարի 1 ից մինչև Յուլիսի 1 ը Ազգիս Վեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ շնորհել հետևեալ Կոնդակները:

Կոնդակ օրհնութեան և խրախուսանաց յանուն միացեալ ընկերութեան Հայոց Կ. Պոլսոյ. ի 5 Յունվ. 1881 ամ. Թ. 1.

Կոնդակ օրհնութեան և խրախուսանաց առ պ. Խաչատուր Պահճեաբայցեանց քաղաքագլուխն Ն. Նախիջևանու սակս դիւրացուցանելոյ և նպաստելոյ բացման Արուեստական Հոգևոր Դպրոցի Ն. Նախիջևանու. ի 5 Յունվարի 1881 ամ. Թ. 2.

Կոնդակ օրհնութեան և խրախուսանաց յանուն պարոնայցն Գաբրիէլի Տրապիզոնցեանց, Սերովբէի Յարութիւնեան և Յովհաննիսի Պապասինեան անդամոց Հոգաբարձութեան Նորարաց Արուեստական Հոգևոր Դպրոցին Ն. Նախիջևանու. ի 5 Յունվ. 1881 ամ. Թ. 3.

Կոնդակ յանուն Գրիգոր Արքեպիսկոպոսի Մուշեղեանց Առաջնորդի Հայոց վիճակին Աստրախանի, որով յայտնէ զգոհունակութիւն և զուրախութիւն իւր յաղագս նորահաստատ հինգ դպրոցաց Հայոց, որ ի գիւղօրայս Աստրախանու և հանգանակեալ դրամոց յանուն յիշեալ նորոգ հաստատեալ Հայկական ուսումնարանացն, որով և միանգամայն ընդ նմին ըստ խնդրանաց Առաջնորդին առաքէ զկոնդակս հաստատութեան Հոգաբարձութեանց հինգ գիւղօրէից ուսումնարանացն ուրոյն ուրոյն. ի 13 Յունվարի 1881 ամ. Թ. 15.

Կոնդակ յանուն անդամոց Հոգաբարձութեան Նորարաց ուսումնարանի Հայոց Ղալասար գեղջ Սալմաստու գաւառի, Արզումանի Բաղալեան Արզումաննեանց, Սողոմոնի Ստեփաննեան Արզումաննեանց, Աղիղի Հասրաթեան Ջանազիզեանց և Սահակայ Շահգելդեանց, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան և պատուիրէ ջան գործել վասն յառաջադի-

մութեան աշակերտաց ուսումնարանի յանձն եղելոյ իւրեանց. ի 13 Յունվ. 1881 ամի. թ. 16.

Կոնդակ յանուն Խուդավերդու Մանասէրեանց, Օնազարի Աւետիսեան Ղուկասեանց, Պետրոսի Ստեփաննեան և Յովհաննու Գալստեան, անդամոց հոգաբարձութեան ուսումնարանի Հայոց Փայաճուկ գեղջ Սալմաստու գաւառի. ի վերոյ գրեալ միտս. ի 13 Յունվ. 1881 ամի. թ. 17.

Կոնդակ յանուն Կարապետի Իսահակեան Թովմասեանց, Մնացականի Գրիգորեան, Սարգսի Խուստավերտեան և Յարութիւնի Ղազարեան, անդամոց հոգաբարձութեան ուսումնարանի Հայոց Հութվան գեղջ Սալմաստու գաւառի. ի վերոյգրեալ միտս. ի 13 Յունվ. 1881 ամի. թ. 18.

Կոնդակ յանուն Յովհաննէս քահանայի Տէր Գրիգորեան և պ. Յովհաննու Առաքելեան անդամոց հոգաբարձութեան ուսումնարանի Հայոց Սաւրի գեղջ Սալմաստու գաւառի, ի վերոյգրեալ միտս. ի 13 Յունվ. 1881 ամի. թ. 19.

Կոնդակ յանուն Մխիթարի Վարդանեան, Գասպարայ Յովհաննիսեան և Յակովբայ Մուրատեան, անդամոց հոգաբարձութեան ուսումնարանին Հայոց Հին Քաղաքի Սալմաստու, ի վերոյգրեալ միտս. ի 13 Յունվարի 1881 ամի. թ. 20.

Կոնդակ Առաքելի Տէր Յարութիւնեան և Փիլիպպոսի Վարդանեան, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան դպրոցի Հայոց Համամլու գեղջ. ի 13 Յունվ. 1881 ամի. թ. 21.

Կոնդակ յանուն Վարդան քահանայի Այվազեանց, Մկրտչի Ղարիպեանց և Ներսիսի Ջօհրապեանց, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան դպրոցին Հայոց Ղըլթամիր գեղջ գաւառին Էջմիածնայ. ի 13 Յունվ. 1881 ամի. թ. 22.

Կոնդակ յանուն Պօղոսի Արիստակեսեան, Մատթէոսի Արզումանեան, Միրզոյի Օրդուեան և Գիւլգիւլի Ալօյեան, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան դպրոցին Հայոց Աստապատ գեղջ Հ. Նախիջեւանու. ի 13 Յունվարի 1881 ամի. թ. 23.

Կոնդակ յանուն Ստեփաննոս քահանայի Վարդանեան, Մելիք—Սամուէլի Մարգարեան, Արզումանայ Յովհաննիսեան և Առաքելի Յարութիւնեան, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան դպրոցի Շուռութ գեղջ Հ. Նախիջեւանի. ի 13 Յունվ. 1881 ամի. թ. 24.

Կոնդակ յանուն պ. Լաւրենտիոսի Մարեւիչի Պրոսսէեան Ս. Պետերբուրգցւոյ յաղագս ստանալոյ զցուցակ հեղինակութեանց հանգուցելոյ հօրն նորա անդամոյ Ճեմարանի Մարիոսի Իվանիչի Պրոսսէի, որով յայտնէ զգոհունակութիւն իւր և գովէ զաշխատութիւնս նորա գրաւորս մաղթելով և զհանգիստ հոգւոյ նորա. ի 20 Յունվարի 1881 ամի. թ. 30.

Կոնդակ յանուն պարոնայցն Ստեփաննոսի Մարտիրոսեան Փափովեանց և Խաչատրոյ Տէր Պօղոսեան Ստեփաննոսեանց Ն. Նախիջեւանցւոց, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան ժառանգաւորաց դպրոցի

Սուրբ Խաչի Վանուց և պատուիրէ անձնանուէր լինել ի պաշտօնի իւ-րեանց. ի 20 Յունվ. 1881 ամ. Թ. 31.

Կոնդակ յանուն Յարութիւն քահանայի Տէր Գրիգորեան, Օհանի Բա-բախանեան, Սիմէօնի Բարայեան և Աւագի Վարդանեան, որով հաստատէ զնոսա իպաշտօնի հոգաբարձութեան Նորահաստատ ծխական դպրոցին Հայոց Ղամարլու գեղջ Գառնւոյ գաւառի. ի 29 Յունվարի 1881 ամ. Թ. 44.

Կոնդակ յանուն Շմաւօն քահանայի Տէր Գրիգորեան, Սահակայ Բար-լայեան, Աւագայ Մկրտչեան [Քիւրդբենդցւոյ և Թասալոյ Թադէոսեան Արտաշատցւոյ, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան ծխական հոգևոր դպրոցի Արտաշատ գեղջ Գառնւոյ գաւառին. յ 31 Յունվ. 1881 ամ. Թ. 45.

Կոնդակ յանուն Եսայի Աւագ քահանայի Ամատունւոյ, Գէորգայ Մորի-կեան, Խաչատրոյ Արշակեանց, Մկրտչի Տէր Մեսրովբեանց և Ստեփաննոսի Մելիքեանց, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան ծխական դպրոցին Հայոց Օշական գեղջ. ի 5 Փետրվ. 1881 ամ. Թ. 53.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Կարապետ քահա-նայի Տէօքմէճեան Զմիւռնացւոյ, վասն նուիրելոյ նորա Մատենադարանի ս. Էջմիածնի զձեռագիր օրինակս 1, պատմագրութեան Աբրահամ Կա-թուղիկոսի Կրետացւոյ, 2, Տեսարանի հանդիսիցն Հայկայ և 3, բնագըն-նութեան. ի 27 Փետրվ. 1881 ամ. Թ. 75.

Կոնդակ օրհնութեան յանուն Պետրոսի և Նունէ ամուսնոյն Գեանջու-մեանց սակս ուխտելոյ նոցա և սկսանելոյ հիմնարկել զօրիորդական հոգևոր դպրատուն Հայոց ի Մոզդոկ. յ 17 Մարտի 1881 ամ. Թ. 95.

Կոնդակ օրհնութեան և խրախուսանաց յանուն և ի պատասխանի գրութեան Սիմէօնի Ռափայէլեան և Վահանայ Թորգոմեան ի գլուխ Նորա-հաստատ «Հայկազեան Ուսումնասիրաց Ընկերութեան Փարիզու». ի 20 Մարտի, 1881 ամ. Թ. 104.

Կոնդակ օրհնութեան յանուն Անտոնի Մելիք-Թամիրեանց Գէորգևորցւոյ սակս նուիրելոյ նորա ըստ տարեկան ուխտին ցկեանս [illegible] րուբլիս փո-խարէն միոյ երիվարի ի հաշիւ 1880 ամ. ի 20 Մարտի 1881 ամ. Թ. 105.

Կոնդակ օրհնութեան առ Զաքարիա քահանայն Ապուլ գեղջ վիճակին Ախալքալակու, սակս նուիրելոյ նորա զԾ հազար րուբլի յանուն Մայր Աթո-ռոյս, որոյ վասն կարգադրեցաւ յերկուս նուագս ի տարին կատարել զպատարագ և զհոգեհանգիստ վասն փրկութեան հոգւոց ննջեցելոցն. ի 20 Մարտի 1881 ամ. Թ. 106.

Կոնդակ յանուն անդամոց ս. Սանդխտեան խնամակալուհեաց Հռիփ-սիմեան ընկերութեան, որով հաստատէ զկանոնադրութիւնս նոցին յօգուտ իգական սեռի գաւառին Շիրակայ, զոր ընդ ժամանակս լինելոյ միոյ ամսենի տարբէ առ նոսա և յորդորէ ձիգն թափել ի բազմապատկել զթիւ անդա-մոց յիշեալ ընկերութեան. ի 6 Ապրիլի 1881 ամ. Թ. 122.

Կոնդակ օրհնութեան և խրախուսանաց յանուն Մարգարէի Տէր Ոսկանեանց Հադրութեցւոյ ի վիճակին Արցախոյ, սակս նուիրելոյ նորա ՃԾ հազար ռուբլի հօգևոր դպրոցի Հայոց Հադրութ գեղջ և զքսան և հինգ ռուբլի հոգ. դպրոցին Հայոց Վարդաշէն գեղջ Նուխւոյ. ի 14 Ապրիլի 1881 ամի Թ. 124։

Կոնդակ յանուն պարոնայց Յովակիմայ Շամքարեանց, Փիլիպպոսի Նաւասարդեանց. Ղազարու Տէր Ղազարեանց, Մկրտչի Քարտաշեանց և Վարդանայ Վարդանեանց, որով հաստատէ զնոսա ըստ խնդրանաց Հայոց Վաղարշապատու ի պաշտօն հոգաբարձութեան շինութեան նորոգ բաղանեաց յանուն և ի սեպհականութիւն ս. Աստուածածին ծխական եկեղեցւոյ Հայոց Վաղարշապատու՝ յատկացուցանելով զտարեկան արդիւնս բաղանեացն ի նպաստ տնտեսական կառավարութեան հոգևոր երկսեռ դպրոցաց տեղւոյն. ի 17 Ապրիլի 1881 ամի. Թ. 126։

Կոնդակ յանուն Սարգսի քահանայի և Գրիգորի Ամիրջանեանց, որով հաստատէ զնոսա ըստ խնդրանաց ժողովրդեան ի հոգաբարձութիւն ծխական դպրոցի Հայոց Աղջաղալայ գեղջ Էջմիածնայ գաւառի. ի 17 Ապրիլի 1881 ամի. Թ 127։

Կոնդակ յանուն Թադէոս քահանայի Տէր Յակովբեան, Յովհաննու Բահրամեան, Գրիգորի Ահարօնեան և Հայրապետի Հախնազարեան, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան ծխական դպրոցին Հայոց Գեչրլու գեղջ Էջմիածնայ գաւառի. ի 17 Ապրիլի 1881 ամի. Թ. 128։

Կոնդակ յանուն Համբարձումայ Հարութեանց, Աւետիքի Գասպարեանց, Առաքելի Ստեփանեանց և Երիսողոմայ Նազարեանց, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան ծխական հոգ. դպրոցի Հայոց Վարախանբէկլու գեղջ Հ. Նախիջևանու. ի 20 Ապրիլի 1881 ամի. Թ. 144։

Կոնդակ յանուն Սամուէլ քահանայի Սողոմոնեանց, Աղախանի Կանայեանց, Պետրոսի Հայրապետեանց, Լևոնի Տէր Մաթէոսեան և Դաւիթի Գրիգորեան, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան ծխական հոգ. դպրոցին Հայոց Իգդիրու քաղաքագեղջ Սուրմալուայ գաւառի. ի 20 Ապրիլի 1881 ամի. Թ. 145։

Կոնդակ յանուն Հայրապետի Արասխանեանց, Սարգսի Հախնազարեանց, Յովհաննիսի Փանեանց և Առաքելի Ներսիսեանց, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան հոգևոր երկսեռ դպրոցաց Հայոց Վերին Ագուլեաց. ի 21 Ապրիլի 1881 ամի. Թ. 146։

Կոնդակ առ Մեծապ. պ. Կարապետ Եզեանց ի Ս. Պետերբուրգ, որով յանձնարարէ նմա օժանդակել Գրիգոր Եպիսկոպոսի Աղափիրեանց առ ի գտանել զուսուցիչս մանկավարժութեան, փիլիսոփայութեան, Ռուսերէն, Գաղղիերէն և Գերմաներէն լեզուաց ի պէտս Գ. Ճեմարանի. ի 29 Ապրիլի 1881 ամի. Թ. 158։

Կոնդակ առ Մեծապ. ուսուցչապետ Քերովբէ Պատկանեանց. ի վերոյ-գրեալ մտաւ. ի 29 Ապրիլի 1881 ամի. Թ. 159։

Կոնդակ առ Մեծապ. Մկրտիչ Սանասարեանց՝ ի վերջացրելոյ միոս. ի 29 Ապրիլի 1881 ամի. Թ. 160.

Կոնդակ յանուն Թադէոս Վարդապետի Տէր Դանիէլեանց փոխանորդին Գանձակու վիճակի. որով հաստատէ զնորահիմն Բարեգործական Ընկերութիւն Հայոց Գանձակու և զկանոնադրութիւնս նորա. ի 19 Ապրիլի 1881 ամի. Թ. 189.

Կոնդակ օրհնութեան յանուն ժողովրդեան Հայոց վիճակացն Աղէքսանդրապոլոյ և Ախալքալակոյ, որով յորդորէ զնոսա նպաստամատոյց լինել շինութեան և վերջաւորութեան սենեկաց հռչակաւոր ուխտատեղւոյն վանուց ս. Գէորգայ Զօրավարի, որ ի Մուղնի. ի 28 Ապրիլի 1881 ամի. Թ. 191.

Կոնդակ յանուն Յովհաննու Վարդանեան Գանձապետի Էջմիածնական կալուածոց և հասութից, գանձանակաց և այլոց ի Զմիւռնիա. որով պատասխանէ նմին և պատուիրէ դնել զերկու գանձանակս առ դուրս եկեղեցեաց յամրագոյն տեղւոջ վիճակին Զմիւռնիոյ յանուն Էջմիածնի. առաքել յանուն Սինոդի զվեցհարիւր քսան և հինգ դահեկանն, որ յարգեանց կալուածոց. ի 29 Ապրիլի 1881 ամի. Թ. 192.

Կոնդակ վկայական յանուն ժողովրդեան Քուրտպէյլէնկ գեղջ վիճակին Նիկոմիդիոյ սակս շնորհելոյ Եկեղեցւոյ նոցա զանուն ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետի. ի 10 Յունիսի 1881 ամի. Թ. 205.

Կոնդակ օրհնութեան յանուն Անտօնի Մելիք—Թամբեանց Գէորգեւկեցւոյ սակս առաքելոյն զտարեկան նուէրն ի 1881 ամի զ64 րուբլի ի նպաստ Մայր Աթոռոյս. ի 23 Յունիսի 1881 ամի. Թ. 236.

Կոնդակ օրհնութեան յանուն Սարգսի Գասպ. Թամբեանց Գէորգեւկեցւոյ սակս առաքելոյն ըստ տարեկան ուխտին ցկեանս զ65 րուբլի ի նպաստ Էջմիածնի ի հաշիւ 1880 ամի. ի 23 յունիսի 1881 ամի. Թ. 237.

Կոնդակ հաստատութեան յանուն նորընտիր հոգաբարձուացն Աբրահամ քահանայի Տէր Բարսեղեանց, Խաչատուր Ազատեանց, Մարտիրոսի Միքայէլեանց և Մկրտչի Յարութիւնեան օրհնելով զնորաբաց օրիորդական դպրոցն Խլփի Վարաքիլիսէ գեղջ վիճակին Աղէքսանդրապոլոյ. ի 23 Յունիսի 1881 ամի. Թ. 238.

Կոնդակ օրհնութեան յանուն Դիլենայ Մարկոսեան Նորքեցւոյ (յԵրեւան) սակս շնորհելոյն զերկու հարիւր րուբլիս ի նպաստ ծխական երկսեռ դպրոցաց Հայոց Նորգայ. ի 23 Յունիսի 1881 ամի. Թ. 241.

Կոնդակ յանուն և ի պատասխանի գրութեան Ներսէս Արքեպիսկոպոսի Պատրիարգի Հայոց Կ. Պօլսոյ, որով պատուիրէ զերկու կամ զերիս վարդապետս ի միաբանից Երուսաղեմի առաքել այսր առ ի հաւաքել զկանոնաւոր նուէրս ի վճարումն պարտուց սուրբ Յակոբեան վանուց Երուսաղեմի. ի 26 յունիսի 1881 ամի. Թ. 242.